ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ՓԱՐԱՔԱՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԱՌԱՋԻՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ
2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 11-Ի 3-ՐԴ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

2022 թվականի ապրիլի 11-ին ժամը 11:15-ին Փարաքար համայնքի ավագանու նստավայրում՝ գյուղ Փարաքար, Նաիրի փողոց 40 հասցեում տեղի ունեցավ Փարաքար համայնքի ավագանու հերթական նիստը, որին մասնակցում է Փարաքար համայնքի ավագանու 21 անդամներից 11-ը, հիմք ընդունելով գրանցման արդյունքները՝ այդ մասին հայտարարեց Փարաքարի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժ/պ:

Փարաքար համայնքի ավագանու հերթական նիստը վարում է համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը: Նիստը արձանագրում է աշխատակազմի քարտուղարի ժ/պ Գ.Մանուկյանը:

Համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը նշեց, որ Կարապետ Արթենյանը վայր է դրել ավագանու մանդատը ստանձնելով համայնքի ղեկավարի տեղակալի պաշտոնը, ըստ ցուցակի հերթականության հաջորդ Կարեն Սաշիկի Մկրտչյանն է մեր ավագանու հաջորդ անդամը, որի առթիվ շնորհավորում ենք:

Նախագահողը՝ համայնքի ղեկավարը ավագանու անդամներին ներկայացրեց նիստի օրակարգի հարցերը և առաջարկեց քննարկել դրանք ու հաստատել օրակարգը:

Օրակարգի որոշման նախագիծը դրվում է քվեարկության:

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Որոշումն ընդունվեց միաձայն

ՈՐՈՇՎԵՑ – Հաստատել Փարաքար համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 2-ի հերթական նիստի օրակարգը և քննարկել առաջադրված հարցերը, այն է՝

1 . Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
2. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
3. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
4. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
5. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
6. Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
7. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և Տիգրան Վազգենի Բալաբանյանի և մյուսներին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին
8. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի համայնքային հիմնարկի, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին
9. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին
10. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2022 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին
11. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին
12. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին
13. Ծրագրերի իրականացման նպատակահարմարության մասին
14. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող Բաղադրիչ 1-ին և Բաղադրիչ 2-ին մասնակցության հայտ ներկայացնելու և համաֆինանսավորմանը հավանություն տալու մասին
15.Համայնքային սեփականության գույքն օգտագործման տրամադրելու մասին
16. Շենքի օգտագործման իրավունքով տրամադրելու մասին

17. Անհատույց գույք տրամադրելու մասին
18. Տարածքների համար վարձավճար սահմանելու մասին
19. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին
20. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին
21. Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին
22. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու նիստի օր սահմանելու մասին

Օրակարգի 1-ին հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Հակոբ Միքաելյանը, նախագիծը վերաբերում է հողի նպատակային նշանակության փոփոխմանը. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող՝ Սուրեն Արամի Ասոյանին սեփականության իրավունքով պատկանող 04-094-0554-0038 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի՝ 3-րդ կարգի խաղողի նշանակությունը անհրաժեշտ է փոփոխել, որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Հակոբ Միքաելյանը, նախագիծը վերաբերում. է հողի նպատակային նշանակության փոփոխմանը. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող, Մերձավան գյուղում՝ Արամայիս Վալերիի Մանուկյանին սեփականության իրավունքով պատկանող 04-065-0503-0148 կադաստրային ծածկագրով 0.9326 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը՝ գործառնական նշանակությունը՝ այլ հողատեսք, անհրաժեշտ է փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար:
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 2-րդ հարցի առթիվ՝ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Հակոբ Միքաելյանը, նախագիծը վերաբերում նախագիծը հետրյալի մասին է՝ հողի նպատակային նշանակության փոփոխմանը. Փարաքար համայնքի Այգեկ գյուղում գտնվող՝ Մելիք Մուխաելի Խաչատրյանին սեփականության իրավունքով պատկանող 04-009-0184-0004 կադաստրային ծածկագրով, 0.31 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասը՝ 4-րդ կարգի կորիզավոր այգին անհրաժեշտ է փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ անասնագոմ և տնտեսական շինություն կառուցելու համար:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ

Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 3-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Հակոբ Միքաելյանը, նախագիծը վերաբերում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող Մուսալեռ գյուղում՝ Բարսեղ Լիտվիենկոյի Գևորգյանին և Սիմոն Կոստանի Կոստանյանին սեփականության իրավունքով պատկանող 04-069-0108-0012 կադաստրային ծածկագրով 0.31 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի՝ 2-րդ կարգի խաղող, նշանակությունը անհրաժեշտ է փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ջերմոցային տնտեսություն կառուցելու համար
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Որոշումն ընդունվեց միաձայն:

Օրակարգի 4-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Հակոբ Միքաելյանը, նախագիծը վերաբերում Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող Արևաշատ գյուղում՝ Թեյմինե Արագածի Հարությունյանին և մյուսներին ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող 04-026-0107-0006 կադաստրային ծածկագրով 0.22 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի՝ վարելահող, նշանակությունը փոփոխել որպես արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ չրանոց կառուցելու համար:
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 5-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Հակոբ Միքաելյանը, նախագիծը վերաբերում. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական սահմաններում գտնվող Նորակերտ գյուղում՝ Սերգեյ Հրանտի Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող 04-074-0105-0056 կադաստրային ծածկագրով 0.04804 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասի՝ 5-րդ կարգի վարելահողի նշանակությունը փոփոխել որպես գյուղատնտեսական. արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության հող, գործառնական նշանակությունը՝ գյուղատնտեսական արտադրական օբյեկտների՝ ստորգետնյա սառնարանային տնտեսություն կառուցելու համար:
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 6-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի պաշտոնակատար Հակոբ Միքաելյանը, նախագիծը վերաբերում. Արմավիրի մարզի Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում փոփոխություն կատարելու և Տիգրան Վազգենի Բալաբանյանի և մյուսներին սեփականության իրավունքով պատկանող հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին- Փարաքար համայնքի գլխավոր հատակագծում կատարել փոփոխություն և Վազգեն Բալաբանյանին և մյուսներին բնակիչների սեփականություն հանդիսացող 04-094-0401-0033 կադաստրային ծածկագրով, 0.1031 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության հողամասից 0,05 հա մակերեսի նպատակային նշանակությունը

փոփոխել որպես բնակավայրերի հող, գործառական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման:
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 7-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին պետի պաշտոնակատար Քնարիկ Մելքոնյանը, ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի համայնքային հիմնարկի, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների կառուցվածքը, աշխատողների քանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին որոշման նախագիծը
Նեկտար Սարդարյան –առաջարկեց մանկապարտեզներում ունենալ ֆիզկուլտուրայի դաստիարակի հաստիք.
Որոշվեց բոլոր մանկապարտեզներում ներառել ֆիզկուլտուրայի դաստիարակի հաստիք.
Մինչև 2 խումբ ունեցող մանկապարտեզում նախատեսել 0.25 դրույքաչափով, 4 խումբ ունեցող մանկապարտեզներում՝ 0.75 դրույքաչափով
Գոռ Սարիբեկյան - առաջարկեց «Հովիկ Էդգարյանի անվան արվեստի դպրոց» ՀՈԱԿ-ում նախատեսել 2 փոխտնօրենի հաստիք, ուսումնական և կազմակերպչական գծով, մանկապարտեզներում գործող պահակների հաստիքները կարելի է փոխարինել օժանդակ բանվորների հաստիքով, նախատեսվում է տեսանկարահանման սարքեր ձեռք բերել, նրանք թող ընդգրկվեն բարեկարգման աշխատանքներ իրականացնող անձնակազմում:
Քնարիկ Մելքոնյան – առաջարկեց պահել պահակների հաստիքները մինչև համապատասխան սարքերի ձեռք բերումը:
Այն հարցին թե ինչու էլեկտրիկ –փականակագործի հաստիք չկա, նշվեց, որ «Բարեկարգում» տնօրինությունում կա համապատասխան հաստիք, կարիք լինելու դեպքում կարող են օգտվել նրա ծառայություններից:
Առաջարկվեց նաև վերանայել մանկապարտեզների տնօրենների դրույքաչափերը. Գոռ Սարիբեկյանն առաջարկեց, այն մանկապարտեզները, ուր կա մինչև 2 խումբ , աշխատավարձ թող լինի 120 000 դրամ, 2 և ավելի դեպքում՝ 135 000 դրամ, Փարաքարի մանկապարտեզի տնօրենինը՝ 205 000 դրամ, յոթ խմբի դեպքում
Քննարկվող նախագծի վերաբերյալ այլ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Որոշվեց Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի համայնքային հիմնարկի, համայնքային ենթակայության ոչ առևտրային կազմակերպությունների աշխատակիցների քանակը, հաստիքացուցակները, պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն NN 1-17 հավելվածների:

Օրակարգի 8-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանը .ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2022 թվականի տեղական տուրքերի և վճարների տեսակներն ու դրույքաչափերը սահմանելու մասին որոշման նախագիծը
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 9-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց Փարաքար համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի վարչական տարածքում 2022 թվականի տեղական վճարների գծով արտոնություններ սահմանելու մասին որոշման նախագիծը
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության

Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 10-րդ հարցի առթիվ զեկույցը ներկայացրեց աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, գնումների, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժին պետի պաշտոնակատար Քնարիկ Մելքոնյանը, ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին որոշման նախագիծը , ներկայացերց համայնքի ղեկավարի ուղերձը համայնքի ավագանուն
Ավագանու անդամ Մարիամ Իսպիրյանն առաջարկեց անցնել հարցի քվեարկությանը քանի որ բյուջեն պատշաճ բոլորին ծանուցվել է
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0 :

Առաջարկվեց հայտարարել 15 րոպե ընդմիջում
Ընդմիջումից հետո նիստը շարունակվեց:

Օրակարգի 11-րդ հարցի առթիվ որոշման նախագիծը ներկայացրեց Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ Կարապետ Արթենյանը,ներկայացրեց Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի կամավոր խնդիրները, կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին որոշման նախագիծը

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Առաջարկվեց հայտարարել 15 պոպե ընդմիջում

Օրակարգի 12-րդ հարցի առթիվ Ծրագրերի իրականացման նպատակահարմարության մասին որոշման նախագիծը ներկայացեց համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը,ներկայացրեց այն 8 ծրագրերը, որոնք նախատեսվում է իրականացնել 2022 թվականի ընթացքում, դրանք են.
1. Նպատակահարմար գտնել և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Երևանյան փողոցի մի հատվածի, Այգեկ բնակավայրի Երևանյան խճուղու և Փարաքար բնակավայրի Արարատյան, Ֆրիկի, Ավետիք Իսահակյան, Հուշարձանի փողոցների ասֆալտապատում» սուբվենցիայի ծրագրին՝ համաձայն հավելված N1-ի:
2. Նպատակահարմար գտնել և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքար համայնքի Փարաքար բնակավայրի Եղիշե Չարենց փողոցի ասֆալտապատում» սուբվենցիայի ծրագրին՝ համաձայն հավելված N 2-ի:
3. Նպատակահարմար գտնել և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Այգեգործների փողոցի, Թումանյան փողոցի և Շիրազի փողոցի, Պտղունք բնակավայրի Ագաթանգեղոս փողոցի, Մուսալեռ բնակավայրի Տիգրան Մեծ փողոցի, Մերձավան բնակավայրի 1-ին, 2-րդ, 3-րդ և 4-րդ փողոցների և Այգեկ բնակավայրի 2-րդ և 3-րդ փողոցների, Փարաքար բնակավայրի Արցախի թաղամասի և Միեր Մկրտչյան փողոցի գազաֆիկացում» սուբվենցիայի ծրագրին՝ համաձայն հավելված N 3-ի:
4. Նպատակահարմար գտնել և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքար համայնքի Այգեկի, Փարաքարի, Թաիրովի, Արևաշատի, Մերձավանի, Պտղունքի, Մուսալեռի, Նորակերտի մանկապարտեզների վերանորոգում, գույքի ձեռքբերում և բակային տարածքների բարեկարգում» սուբվենցիայի ծրագրին՝ համաձայն հավելված N 4-ի:

5. Նպատակահարմար գտնել և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքար համայնքի Բաղրամյան բնակավայրի Կոմիտաս փողոցի մի հատվածի և Փարաքար բնակավայրի Սևանի փողոցի տուֆով սալարկում» սուբվենցիայի ծրագրին՝ համաձայն հավելված N 5-ի:
6. Նպատակահարմար գտնել և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքար համայնքի Մուսալեռ, Պտղունք, Մերձավան, Փարաքար, Նորակերտ բնակավայրերի բուժամբուլատորիաների և Փարաքարի կենցաղի տան վերանորոգում, գույքի ձեռքբերում» սուբվենցիայի ծրագրին՝ համաձայն հավելված N 6-ի:
7. Նպատակահարմար գտնել և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքար համայնքի Մուսալեռ, Մերձավան, Փարաքար, Այգեկ, Բաղրամյան, Նորակերտ բնակավայրերի բազմաբնակարան շենքերի վերանորոգում և բարեկարգում» սուբվենցիայի ծրագրին՝ համաձայն հավելված N 7-ի:
8. Նպատակահարմար գտնել և հավանություն տալ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի «Փարաքար համայնքի Բաղրամյան, Այգեկ, Նորակերտ, Արևաշատ, Մուսալեռ, Մերձավան, Պտղունք, Փարաքար բնակավայրերում խաղահրապարակների կառուցում և գոյություն ունեցող խաղահրապարակների վերանորոգում» սուբվենցիայի ծրագրին՝ համաձայն հավելվածի N 8-ի:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 13-րդ հարցի առթիվ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքում Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամի կողմից իրականացվող Բաղադրիչ 1-ին և Բաղադրիչ 2-ին մասնակցության հայտ ներկայացնելու և համաֆինանսավորմանը հավանություն տալու մասին, հարցը ներկայացրեց ավագանու անդամ Գոռ Սարիբեկյանը
այդ բաղադրիչներն են
_Կոմունալ սպասարկման հատուկ տեխնիկական միջոցների ձեռքբերում/թվով 4/ և համայնքային սեփականության շենքերի և կեղտաջրերի մաքրման կայանի էլեկտրականության մատակարարում արևային կայանների միջոցով:

Սպորտ դպրոցի կառուցում:
. Բաղադրիչ 1-ի շրջանակներում ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով՝ Փարաքար համայնքի Փարաքար գյուղում սպորտ դպրոցի կառուցում: Ծրագիրն ունի հատուկ պահանջ, այն է՝ համայնքը պետք է կատարի կառուցման աշխատանքների արժեքի 10% -ի համաֆինանսավորումը: Փարաքար համայնքի կողմից ներկայացրած հայտը Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հավանության արժանանալու դեպքում աշխատանքների արժեքի 90% -ի ֆինանսավորումը կատարվելու է ՀՏԶՀ-ի կողմից:
-Բաղադրիչ 2-ի շրջանակներում ծրագրին մասնակցելու համար դիմել Հայաստանի Տարածքային զարգացման հիմնադրամին (ՀՏԶՀ)՝ համայնքի հետևյալ առաջնահերթ խնդրով: Կոմունալ սպասարկման հատուկ տեխնիկական միջոցների ձեռքբերում/թվով 4/ և համայնքային սեփականության շենքերի և կեղտաջրերի մաքրման կայանի էլեկտրականության մատակարարում՝ արևային կայանների միջոցով: Ծրագիրն ունի հատուկ պահանջ, այն է՝ համայնքը պետք է կատարի կառուցման աշխատանքների արժեքի 5% -ի համաֆինանսավորումը: Փարաքար համայնքի կողմից ներկայացրած հայտը Տարածքային զարգացման հիմնադրամի կողմից հավանության արժանանալու դեպքում աշխատանքների արժեքի 95% -ի ֆինանսավորումը կատարվելու է ՀՏԶՀ-ի կողմից: Կան նաև պայմաններ, դրանք են՝
Վերականգնված ենթակառուցվածքը չօտարել, չսեփականաշնորհել կամ չօգտագործել այլ նպատակներով ծրագրի ավարտից հետո 15 տարվա ընթացքում:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 14-րդ հարցի առթիվ .Համայնքային սեփականության գույքը վարձակալությամբ տրամադրելու մասին, հարցի նախագիծը ներկայացրեց Գոռ Սարիբեկյանը , նշեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող լուսավորության սյուները կապի և հաղորդակցության մալուխների անցկացնելու նպատակով վարձակալությամբ տրամադրել «Ռեդինետ» փակ բաժնետիրական ընկերությանը:

Լուսավորության սյուների վարձակալության ժամկետը սահմանել մեկ տարի, յուրաքանչյուր սյան համար ամսական 600 (վեց հարյուր) ՀՀ դրամ վարձավճարով:

Հարցեր զեկուցողին
Ավագանու անդամ Ա.Վարդանյան – իսկ հնարավոր չէ որ վարձավճարը ավելի բարձր դնել
Գոռ Սարիբեկյան- ես մտածում եմ ավելի լավ կլինի բոլորին ներգրավենք, նոր մտածենք վարձավճարը ավելացնել, այս տնտեսվարողը որոշել է սյուներն օգտագործել օրինական ճանապարհով, հետևաբար անհրաժեշտ է ընդառաջել. Հետագայում վարձավճարի ավելացնելու համար կանցկացնենք լրացուցիչ քննարկումներ
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 15-րդ հարցի առթիվ Շենքի օգտագործման իրավունքով տրամադրելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը, նա նշեց, որ մեզ է դիմել «Փարաքարի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ տնօրենը, խնդրանքով, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Փարաքար գյուղի Ի.Գասպարյան փողոցի թիվ 2 հասցեում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող շենքն (կադաստրային ծածկագիր 04-094-0063-0005, սեփականության իրավունքի գրանցման վկայական N 23052018-04-0040) անհատույց օգտագործման իրավունքով, տրամադրվի «Փարաքարի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ միջնակարգ դպրոցի աշխատանքները կազմակերպելու համար՝ 30 ամիս ժամկետով: Քանի որ հին շենքը վթարային էր և որոշվել է կառուցել նորը:
Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 16-րդ հարցի առթիվ Անհատույց գույք տրամադրելու մասին, նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի Դավիթ Մինասյանը, նշեց որ դիմել է «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Հայկ Կարապետյանը՝ 2022 թվականի մարտի 23-ի Ել.ՀՓ/1909-2022 թվակիր գրությամբ՝ փաստային բաժանմունքին տարածք հատկացնելու համար, առաջարկում եմ Հայստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականությունը հանդիսացող Արմավիրի մարզի Մուսալեռ գյուղի Շառլ Տիրան-Թեքեյան փողոց թիվ 2/1 հասցեում գտնվող շենքի (կադաստրային ծածկագիրը 04-069-0056-0155) թիվ 11 սենյակը 16.82 քառակուսի մետր մակերեսով՝ համաձայն շինությունների հատակագծի, տրված 04.04.2022 թվականին «Պրոֆ-էքսպերտ» ՍՊԸ-ի կողմից, անհատույց օգտագործման իրավունքով, անորոշ ժամկետով տրամադրել «Հայփոստ» փակ բաժնետիրական ընկերությանը: որպես Մուսալեռ գյուղի 1140 փոստային բաժանմունք օգտագործելու համար,

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 17-րդ հարցի առթիվ Տարածքների համար վարձավճար սահմանելու մասին, որոշման նախագիծը ներկայացրեց Գոռ Սարիբեկյանը, նշեց, որ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի սեփականություն հանդիսացող մշակույթի տան շենքերի տարածքները տրամադրելու համար մատուցվող ծառայության դիմաց գանձվող վճարի դրույքաչափ սահմանել համապատասխան խմբակում ընդգրկված յուրաքանչյուր անձից գանձվող վճարի 15 տոկոսի չափով, իսկ ջեռուցման շրջանում 20 տոկոսի չափով:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Գոռ Սարիբեկյանը անդրադարձավ նաև ՋՕԸ –ին ոչ պատշաճ կատարած աշխատանքների համար քանի որ դիմել են բնակիչներ, անհրաժեշտ է միջոցներ ձեռնարկել այն կանխելու համար:

Օրակարգի 18-րդ հարցի առթիվ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի առաջին տեղակալ նշանակելու մասին,նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը առաջարկեց .Լյուդվիգ Արիստակեսի Գյուլնազարյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի առաջին տեղակալ:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Լյուդվիգ Գյուլնազարյանը շնորհակալություն հայտնեց վստահության համար, նշեց որ բոլոր ուժերը կուղղի համայնքի բարգավաճման համար:

Օրակարգի 19-րդ հարցի առթիվ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ նշանակելու մասին, նախագիծը ներկայացրեց Դավիթ Մինասյանը, առաջարկեց Գոռ Արմենակի Սարիբեկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ղեկավարի տեղակալ:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0
Գոռ Սարիբեկյանը շնորհակալություն հայտնեց, նշեց որ անցել են դժվար երկար ճանապարհ և պատրաստակամություն հատնեց նվիրված աշխատելու համար:

Լյուդվիգ Գյուլնազարյանը կրկին շնորհակալություն հայտնեց և հորդորեց անել ամեն ինչ, որպեսզի արժանանանք «Լավագույն համայնք» կոչմանը:

Օրակարգի 20-րդ հարցի առթիվ Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով ստեղծելու և դրա անհատական կազմը հաստատելու մասին, նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավարի տեղակալ Գոռ Սարիբեկյանը, նշեց, որ անհրաժեշտ է ունենալ համայնքում խնամակալության և հոգաբարձության հանձնաժողով և ներկայացրեց հանձնաժողովի կազմը.

Գոռ Սարիբեկյան - Փարաքար համայնքի ղեկավարի
տեղակալ

(հանձնաժողովի նախագահ)

Լաուրա Համբարձումյան - Փարաքարի համայնքապետարանի
աշխատակազմի սոցիալական աջակցության և
առողջապահության հարցերի բաժնի
պետի ժամանակավոր պաշտոնակատար

Արաքսյա Վարդանյան – Փարաքար համայնքի ավագանու անդամ

Վերա Բաբայան - Մուսալեռ գյուղի միջնակարգ դպրոցի մանկավարժ

Արմեն Վեզիրյան – Նորակերտ գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն

Պապ Գևորգյան - Այգեկ գյուղի միջնակարգ դպրոցի ուսուցիչ

Զարուհի Ստեփանյան – Մերձավան գյուղի միջնակարգ դպրոցի տնօրեն

Արփենիկ Վարդանյան - Արևաշատ գյուղի վարչական ղեկավար

Անժելա Թորոսյան - «Լայթ Հաուս» բարեգործական հիմնադրամի փոխտնօրեն

(համաձայնությամբ)

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Օրակարգի 20-րդ հարցի առթիվ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Փարաքար համայնքի ավագանու նիստի օր սահմանելու մասին, նախագիծը ներկայացրեց համայնքի ղեկավար Դավիթ Մինասյանը, առաջարկեց հաջորդ նիստի օրը սահմանել 2022 թվականի մայիսի 11-ին:

Քննարկվող նախագծի վերաբերյալ հարցեր չեղան:
Նախագահողն առաջարկեց որոշման նախագիծը դնել քվեարկության
Քվեարկությանը մասնակցեց – ավագանու 11անդամ
Քվեարկության արդյունքները՝ կողմ – 11, դեմ – 0, ձեռնպահ - 0

Գոռ Սարիբեկյանը հայտարարեց, որ սահմանված ընթացակարգի համաձայն ավագանու լիազորությունները վայր է դնում և ավագանու անդամ է լինում ցուցակում հաջորդ համարը զբաղեցնողը՝ Ռուբիկ Աղեկյանը:

Օրակարգի հարցերը սպառվելուց հետո ավագանու նիստը հայտարարվեց փակված:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ.ՄԻՆԱՍՅԱՆ

ԱՐՁԱՆԱԳՐՈՂ՝ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ Ժ/Պ՝ Գ.ՄԱՆՈՒԿՅԱՆ